

ազդի մտ, վասն զի նոցա գրականութեան շահը կ'փայլի մշտապայծառ լուսաւորութեամբ, վասն զի նոցա պիտաւոր ջանքն և ճիւղն է խրիանց մայրենի լեզուի երկնապարգև ներշնչութիւնն ընդունել և մշակել: Բայց սուրբ նշխարաց մեր երանելի վարդապետներին, որ որպէս անմահ մեծագործութիւններ թողին յետնոցս աւանդ Հայկական գրականութեան պարունակող մատեններն: Ամենայն մի Հայագէտ օտարազգի ուսումնականի ծանօթ են մեր հոգեկոյս մատենագիրների սուրբ անուններն և մատենագրութիւններն: Կ'ընթեռնուն նոքա անգագար հետաքրքրի աշխուժով և նոցա արժանավայել գործոց նշանակութիւններն ճանաչելով՝ նոքա ևս կ'կրկնեն հանգիստ ձեռք: Եթէ Հայկական գրականութիւնը արժանի է գովեստից և ուշադրութեան օտար ազգերին, և նորա քաղցր ճաշակն մեզ Հայոցս քմբերին զմայլումն կ'բերէ, և երկնային մանանայի պէս կ'յագնենէ զմեր հողիքն, և միանգամայն ուրիշ գիտութիւններ ձաշակելու ոյժ և աշխոյժ կ'տայ, և եթէ զանապիւր

գործունէութեամբ միայն կ'հասանի ամենայն մի ժողովուրդ լուսաւորութեան, և նորա ընթացքը դէպ 'ի գիտութիւնն անսպթմար է և ուղիղ, եթէ ունի նա ջանակուս և անձնաղոճ մեծագործ անձինքներ այս սրբազան առարկայի յառաջադիմութեանը համար աշխատող, և մեզ չհայերիս դէպ 'ի գիտութիւն Կանոն ճանապարհներն ունին ուղիղ շաւիղներ. ուրեմն չ'զանդաղինք, հայ եղբայրներ, մեր մայրենի լեզուի սրբութիւնը իրական կերպով պաշտելու. չ'նայինք անտարբեր սրտիւ լուսաւոր ազգերի յառաջադիմութեանց վերայ. գոն գործենք ոչ միայն անուամբ Ազգութեան սուրբ պարոքն անվճար թողնելու, այլև գործնական կարողութեամբ փութանք մեր ճոխ գրականութեան պարտիզին մեջ աշխատելու, որպէս զի կարողանանք տիրել մեր մայրենի լեզուին նոյն պարտիզի քաղցրաճաշակ պտուղների վայելման յոյսով:

Յովնանէն Մարտիկանց:

ՅԱՂԵՆՈՒՄԵՐՈՒԹՅՈՒՆ:

Գ Ա Ր Ո Ւ Ն

Էանց ձմեռն և ցրտութիւն՝ մեզ մառախուղն շուտափոյթ,  
 Առուաց պաղիլ էանց ահա և բարդիլ ձեանցն կոյտ 'ի կոյտ.  
 Խոտվարար հողմք սաստկաշունչ և ամպք մթին ձմերան,  
 Ցրտասառսուս բուքք մարդախեղդ անցին նդ աւուրց տիրական  
 Երդ ժամանեաց մեզ ճոխ դարուն զեփուսն զմեզք առնու պար,  
 Ծիծաղադէմ՝ ոսկեգիսակ փաղվի արփին յիւր կամար.  
 Երժամափայլ սահին առուակք և խոխոջնն ջինջ աղբերք.  
 Մեղրամակարդ ծաղկամբք պճնին Կաշտք և Հովիտք բարբերք:  
 Քաղցրազրուցիկն ահա Սարեակ՝ տեսէք զիարդ գեղգեղէ.  
 Մինչ զի զսիրտ և զսիրտ մարդկան՝ ահ 'ի զմայլու արկանէ.  
 Միրանուագն սիրուն Սոխակ ընդ թուփ ընդ ծառ և ծաղիկ,  
 Անդուլ երգօք զիւրն որոնէ զսիրելին վարդ փափկիկ.  
 Չայնք կաբաւուց և 'ի հովտաց արձագանգն համակ խինդ,  
 Խումիք ճնճղկաց ընդ ճիղ ծառոց ճուռոզնն յար թինդ 'ի թինդ.  
 Աշխատասէր և դունդք մեղուաց տղզան բղզան 'ի ծաղիկ,  
 Շարարածուծ ծծել զհիւթ 'ի նիւթ մեղրից անուշիկ:  
 Տեսէք որպէս քաղցրիկ մայէ չքնաղ գառնուկն 'ի դաշտին,  
 Եւ աշխուժիւ հովիւրն քաջ սուրէ սրիւնգն մեղմազին.  
 Բառանէք եզանց՝ խրխինջք ձիոց ընդ բլուրս ընդ հովիտ,  
 Որպէս առնեն համակ ունկանց ուրախախառն լսելի:

Չարմանք արեւ ինձ գլխովին՝ թէ մերկանդամ ծագք զեւրդ,  
 Ի մերկ յասոց կանաչաթոշր զարդարեցան զերազարդ,  
 Ո՞ հաւատար տրեղաղեմ և գոսացեալ բոյսք և տունկք,  
 Շքեղ այսպէս փատարարդիլ զերթ յաղինեան ծառատունկք,  
 Յարդ իշխեք մեզ հոգի՛ բքարար և ցուրան ձմերան զառնաշունչ,  
 Ահա զեփեռն մեզ զովտախիւս հնչէ խաղաղ կենսաշունչ,  
 Երդ հաշտութիւն . արդ քաղցրութիւն, արդ սէր ծաւալ 'ի բնութեան,  
 Յամենեպէն հանատարած խաղայ խնդանք շերկրութեան,  
 Ո՞ղ . արդարև մեծ ես զու Տէր՝ զու և առնես սքանչելիս,  
 Չանցուսպին պճնես 'ի զեղ և 'ի կարգս 'ի բարիս,  
 Չի 'ի կամոց քոց միմիայն կախին բնութիւնք ամենայն,  
 Որպէս կամիս նոյնպէս շարժին զի հպատակ տեսող կանո  
 Ե՛լս . Հպկազանցս Տէր, թող աշխարհ զերթ պերճ՝ գարուն նորասրանչ,  
 Քե նորագեղ բարեկարգեալ զպցէ յիրև ճոխապանծ,  
 Տեսն՝ որպիսի՛ նախաանն մեզ արք փանաքի շարասեր . . .  
 Եւ զբացիք ծիծաղին զմեզ՝ ծառայք յառնեն բնորդիմ մեր,  
 Նորակրօնք եղեալ են զայք գտնադղեսա ձևացեալ,  
 Հնչին 'ի մեզ հոգեստատու հողքի թիւր ուսմամբ շարաեղալ .  
 Որով և սիրտք մեր 'ի միմեանց պաղցեցուցեալ տաստկապին,  
 Տիրեն մեզ հեռք տակրութիւնք և անջատու մե դառնապին  
 Վանորոյ Տէր՝ զու յարուցեալ զիմայ յարգս Հպկազանն,  
 Չի ժամանակն արդ զիմայդ հասեալ է ժամն իսկական,  
 Քաղցրահայեաց երևեցո՞ արփիտղեղ դէմք քցին,  
 Չմեռնացեալ սառնաստոց . . . Թշուտակիր աշխարհին,  
 Եղէ՛ ջերմիւ անեղ արփուրդ ստոնամանիք մեր սրտից,  
 Գեթ հաղերով և 'ի հոգեւոր հնչեցէ սիգ զովալից,  
 Որով մնաց մեր անդաստանք ծաղիօք ուսման պճնեցի,  
 Եւ սէր անկեղծ հոգեդարար 'ի հոգիս մեր տպեցի:  
 Եւ երբ այսպէս յերաշըջեալ անխք ամաց բարերաստ,  
 Գարուն չքնաղ զառնայ 'ի մեզ՝ հողքի լռեցին շարասաստ,  
 Ի հայրենիս հարազտոր մեր եկեալ սիրով անկասկած,  
 Ո՞՛հ՝ միգրան յոյ՛ն վե՛հ գարնան տացոք փառս քեզ Աստուած:

Գ. Բ. Բ. Բ. Ուրադուկէր Սարգիսեան

### Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ՍՆԱՓԱՌՈՒԹԻՒՆ ԵՒ ՇԱՀԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ո՛չ մէկ մեղութեանց շատուածն չունի աշխարհիս վերայ այնչափ երկրպագութեամբ և խնկարկուք, որքան որ այս երկու գլխաւոր ախտից աստուածուհիներ, ամէն տեղ սոցա համար փատար մեհուաններ, ամէն տեղ սոցա բարձրարեւձ բազմներ, ամէն քաղաքացի և զիւրից մեջ սոցա համար երգեցիկ գուտաններ և մարդազօհեր պատրաստ են: Քրիստոնէութիւնն, որ իւր կենսարեր վարդապետութիւններով կապալաշտութեան դէմ այնչափ պատերազմեցաւ, կուտունները տապալեց և կուտունները: